ԼՂՀ-Հայաստանի Հանրապետություն ինտեգրման հրամայականները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Օժանդակության «անհրաժեշտն» ու «բավարարը»

Թե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքական օրակարգում, թե՛ յուրաքանչյուր հայի մտահոգություններում ու իղձերում Լեռնային Ղարաբաղի ապագայի խնդիրն առաջնային է: Հաճախ, կարևորելով այս կամ այն խնդիրը, փորձում ենք օգնել, համարելով, որ ապագայում մեր իղձերի կատարման համար մեր օգնությունը, մեր ներդրումը, մեր դրամն ինքնին բավարար կռվան է: Նման օգնությունը սակայն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Անհրաժեշտ է այնպիսի հիմք ձևավորել, որը ԼՂՀ զարգացումը կդնի ինքնաբավ ու ինքնուրույն ուղու վրա, կարագացնի դրա ընթացքը և կբազմապատկի գործադրվող ջանքերը: Նման հիմք ձևավորելու համար ֆինանսական ռեսուրսն ու բարձր մակարդակով համագործակցությունը բավարար չեն: Ավելին, ՀՀ և ԼՂՀ հասարակությունները որոշակիորեն անջրպետված են. վարվող արտաքին քաղաքականությունն ու ներքին իրականության ոչ լիարժեք համադրելիությունը այս են վկայում: Անջրպետը մարտահրավեր է ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը և շարունակաբար խոչընդոտում է պետականության կայացմանն ու հասարակության զարգացմանն ու ինտեգրմանը: Եվ սա այն պարագայում, երբ առնչվում ենք ԼՂՀ-ի, մասնակիորեն նաև՝ Հայաստանի հանդեպ վարվող մեկուսացման քաղաքականությանը: Հայաստանին ու Արցախին ձեռք մեկնող աշխարհասփյուռ հայության պարագայում եզրակացությունը հստակ է. «եթե օգնում ես, բայց չես շփվում ու հարաբերություններ կառուցում, ապա օտարանում ես ու ապաինտեգրվում»:

Գործակցություն. ամենից կարևորը

Եվ այսպես, ԼՂՀ-ին օգնության մեկնող ձեռքերը քիչ չեն: Օգնությունը տրամադրվում է թե՛ պետական մակարդակով՝ բյուջետային վարկի տեսքով, թե՛ աշխարհասփյուռ հայության կողմից՝ համահայկական հիմնադրամի հանգանակության խողովակով: Կա նաև պարզ, մարդկային միասնություն՝ բոլորս հայ ենք: Ստացվում է, որ մարդկային ու պետական հարթություններում կապերն ամուր են, սակայն թերևս ամենակարևոր՝ քաղաքացիական հասարակության հարթության մեջ խզումն ակնհայտ է: ՀՀ և ԼՂՀ քաղաքացիական հասարակության միջև համագործակցության բացակայությունը նպաստում է անջրպետի խորացմանը՝ մեծացնում շահարկումների վտանգը, թուլացնում լիարժեք ժողովրդավար պետականության կայացումը: Այսօր Հայաստանի բազմաթիվ կառույցներ ավելի մեծ պատրաստակամությամբ աշխատում և համագործակցում են եվրոպական ու ամերիկյան հասարակական կազմակերպությունների հետ, քան փորձում են գործընկերներ գտնել ու ծրագրեր իրականացնել ԼՂՀ-ում: Այս իրողությունը, թերևս, բազմամիլիոնանոց ծրագրերի առկայության հետևանք է, որի արդյունքում ստեղծված համագործակցությունը մեծացնում է ծրագրերի արդյունավետությունը, ընդլայնում ու հարստացնում քաղաքացիական հասարակության սպեկտրը, խթանում բազմակարծությունը: Նման դրական ազդեցությունն անհնարին կլիներ, եթե միջազգային զարգացման գործընկերները միջոցները տրամադրեին բացառապես մեկ սուբյեկտի, ինչը զգալիորեն կթուլացներ միջոցների օգտագործման գործընթացի հաշվետվողականությունը, կհարվածեր դերակատարների պատասխանատվությանն ու նրանց գործունեության թափանցիկությանը, թերևս նաև՝ օրինականությանը: Հետևությունն ակնհայտ է. ԼՂՀ-ի և ՀՀ-ի հասարական կառույցների միջև անմիջական համագործակցությունը ավելի կհարստացնի քաղաքացիական հասարակության ներկապնակն ու կընդլայնի դրա սպեկտրը և զգալիորեն կկրճատի առկա անթույլատրելի անջրպետը քաղաքացիական հասարակության հարթության մեջ: Միաժամանակ, ակնհայտ է, որ նման համագործակցությունը պահանջում է միջոցներ, սակայն դրանց ձևավորման աղբյուրների և հատկացման մեխանիզմների ստեղծման խնդիրը մնում է չլուծված:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Խոչընդոտներն ինչպես որ կան

ՀՀ և ԼՂՀ քաղաքացիական հասարակությունների ակտիվ ինտեգրումը խթանելուն ուղղված գործունեությանը խոչընդոտում են մի շարք գործոններ.

- ներկայում պետություն-հասարակական կազմակերպություններ հարաբերությունների ու առավել ևս՝ գործակցության շուրջ մշակված մոտեցումներ չկան, խաղի կանոնները զարգացման փուլում են,
- հասարակական կազմակերպությունների ու իշխանության միջև հարաբերությունները երբեմն-երբեմն անտագոնիստական են. կառուցողական քննադատության մշակույթ չի կայացել,
- թեպետ ՀՀ կառավարությունը բյուջետային միջոցներով ՀԿ-ներին ծրագրեր պատվիրելու որոշակի փորձ ունի, այդուհանդերձ առկա մեխանիզմներն անկատար են և էականորեն զիջում են միջազգային զարգացման գործընկերների աջակցության մեխանիզմներին ու զարգացած երկրների բյուջետային փորձին, ԼՂՀ-ին աջակցության ներկա գործընթացն իրականացվում է ինքնահոսով, թեև առանց ակնհայտ բացասական արդյունքների:

Լավ է շուտ, քան ուշացած

Կառավարման փորձ ունեցողները լավ գիտեն՝ որոշումների մեծամասնությունը կայացվում է, երբ այլևս հնարավոր չէ հետաձգել որոշումը: Չպետք է թողնել, որ դանակը հասնի ոսկորին և նոր միայն քայլեր ձեռնարկել. ՀՀ և ԼՂՀ անջրպետի խորացումը կանգնեցնելու ու ինտեգրման գործընթացները խթանելու համար անհրաժեշտ է որոշումներ կայացնել այսօր ևեթ: Որոշումները կարող են տարբեր լինել, սակայն պետք է նպատակին հասնեն ու պարունակեն իշխանություն-հասարակական կազմակերպություններ-ՀՀ-ԼՂՀ ինտեգրման առաքելության ուրվագծերը: Այս ուղին կարող է ենթադրել որոշ կառույցների ստեղծում, ինչպես օրինակ.

- ՀՀ-ԼՂՀ ինտեգրման քաղաքականության խորհրդակցական մարմինը,
- ՀՀ-ԼՂՀ ինտեգրման քաղաքականության իրականացման և վերահսկողության լիազոր մարմինը:

Նոր հեռանկարներ

Առաջարկվող քաղաքականության արդյունքում կիրագործվեն նաև մի քանի այլ հեռանկարային նպատակներ: Մասնավորապես.

- ինստիտուցիոնալ հիմքերի վրա կդրվի ՀՀ-ԼՂՀ ինտեգրման գործընթացը,
- ՀՀ-ում տեղի ունեցողբարեփոխումների զգալի մասը, որն իրականացվում են տեղական ՀԿ-ների միջոցով ու արտաքին օժանդակությամբ, կընդլայնվի դեպի ԼՂՀ՝ ՀՀ օժանդակությամբ և ՀԿ-ների միջոցով,
- կիստակեցվեն պետական բյուջեի հաշվին հասարակական կազմակերպությունների միջոցով պետական ծրագրերի արդյունավետ իրագործման և վերահսկման մեխանիզմները,
- կուրվագծվի ու կինստիտուցիոնալացվի իշխանություն-քաղաքացիական հասարակություն հարաբերությունների ու գործակցության շրջանակը՝ նվազեցնելով բևեռացումն ու անվստահությունը,
- հիմք կդրվի ՀՀ օժանդակության ինստիտուտի կայացման համար, որը ՀՀ արտաքին օժանդակության քաղաքականությունը կիրականացնի նաև այլ երկրներում:

Համառոտագիրը մշակվել է 2010թ-ի նոյեմբերի 1-ին կայացած՝ «Հայաստան - ԼՂՀ հասարակությունների համագործակցության անհարժեշտ ինստիտուների ստեղծում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Սևծովյան Խաղաղության կառուցման ցանցի աջակցությամբ: